ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈԴԻՑ ԳԱՎԱՌԻ ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Պատմական Հայաստանի Արցախ աշխարհի Սոդք գավառի Սոնասար բնակավայրից տաս կմ հեռավորության վրա բարձրադիր հովտում 2010 թ. հայտնաբերվել է հինավուրց դամբարան (աղ. I, 1): Հուշարձանը կառուցապատված է անմշակ խոշոր վեմերով (երկար. մոտ 2 մ, լայն. մոտ 1.50 մ, բարձր. մոտ 1.50 մ): Դատելով տեղադրությունից հանգուցյալը հուղարկավորվել է երկար պատի մոտ գտնվող բազալտե սարկոֆագում (աղ. I, 2): Դամբարանի շքեղ գտածոները ոսկուց, արծաթից և բրոնզից են: Հայտնաբերված նյութերը հուշում են, որ հանգուցյալը գեղեցիկ սեռի ոչ շարքային ներկայացուցիչ է: Դամբարանի թալանված վիճակը հնարավորություն չի տալիս դատել նյութի ամբողջության մասին: Այդուհանդերձ հայտնի նյութերը արտակարգ հետաքրքիր են և հնարավորություն են ընձեռում որոշել դամբարանի գոյության ժամանակը:

Հայաստանի Սյունյաց աշխարհի բաղկացուցիչ մասը կազմող այժմյան Սոդքը ըստ «Աշխարհացույց»-ի Սյունիքի վեցերորդ գավառն էր: Զբաղեցնում էր 1402 քառ. կմ տարածք: Աղուան գետի (այժմ Հագարու) վերին հոսանքի տարածքում գտնվում էր Աղահեճք գաւառը[1]: Գահնամակում «Սիւնեաց երկրորդն» իշխանությունը փոխարինել է Ծավդեից իշխանությանը, որը հիշատակվում է նաև «Զորանամակում» և V դարի հայ հեղինակների երկերում[2]: Սյունյաց աշխարհը պատմական աղբյուրներում հայտնի էր իր հանքերով, այդ թվում ոսկու հանածոներով: Դրա լավագույն ապացույցներն են հանդիսանում Սիսիանի կառավարչի[3] և Սոդքի անտիկ դամբարանները:

Սոնասարի դամբարանի գտածոների մեծ մասը աղերսվում է Սիսիանի կեղծ թաղով իշխանական դամբարանի նյութերի հետ: Երբեմն նույնիսկ թվում է, որ դրանք կերտվել են նույն վարպետի կողմից կամ նույն արհեստանոցի արտադրանք են[4]:

Փայտե գահավորակի ձևավոր ոտքերին փաթաթած բրոնզե թիթեղ-

[1] **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 32:

[2] **Բ. Հ. Հարությունյան,** Գահնամակի թվագրման հարցի շուրջը, – Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 2, էջ 58, 70, 71:

[3] **Ժորես Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես): – Հայաստանի հնագիտական հուշարձանները, 21, Երևան, 2009, աղ. I–XI:

[4] Նույն տեղում:

ները (17) վկայում են, որ դրանք տեղադրված են եղել սարկոֆագի և մյուս երկայնական պատի միջև եղած հատվածում (աղ. II, 1, 2, 3, աղ. III, 1, 2, 3):

Դամբարանի գտածոների մեջ իրենց բազմազանությամբ ուշագրավ են սկավառակաձև երկու անցքով դրոշմելու եղանակով պատրաստված ոսկե բարակ թիթեղյա տարբեր չափերի վարդյակները, որոնք երեք խումբ են: Առաջինը քանակով ավելի շատ է (48 հատ, տրամագիծը 13 մմ), ուռուցիկ զարդերով, կրկնակի շրջագծով, երկու անցքով (աղ. IV, 4): Երկրորդ խումբը (10 հատ, տրամագիծը 12 մմ), կենտրոնական շեշտված ուռուցիկ գնդիկով, երկու անցքով և մեկ շրջագծով (աղ. V, 1, 2): Երրորդ խումբը փոքրաթիվ է (22 հատ, տրամագիծը 11 մմ), կենտրոնական ելուստով, առանց շրջագծի (աղ. V, 2): Կարծում ենք երկրորդ և երրորդ խմբի ոսկե սկավառակաձև վարդյակները լրիվ մեզ չեն հասել: Սոդքի (Սոնասարի) սկավառակաձև, զգեստը հարդարելու համար արված երկու անցքով և ընդհանրապես նման ետևում մեկ կամ երկու օղակով, կամ եզրին ամրացված գլանաձև խողովակով զարդերը տարածված էին հելլենիստական և ուշ անտիկ շրջանում: Այդպիսիք Հայաստանում հայտնաբերվել են Գառնի ամրոցից և դամբարանից[1], Օշականի[2], Սիսիանի[3] Աշնակի[4] դամբարաններից, Վրաստանից՝ Սամադլոյից[5], Ժինվալիից[6], Բակտրիայից՝ Թիլյա-Թեփեից[7], Հյուսիսմերձսևծովյան շրջաններից՝ Չերտոմլիկի կուրգանից[8] և այլ վայրերից:

Ուշադրության արժանի է օվալաձև կենտրոնով ձգվող ակոսով, դրանից աջ ու ձախ պատկերված գծիկներով՝ երկու ծայրին անցքերով (երկ. 15.9 մմ) ոսկե զարդը, որը կաուրիի (խխունջ) ընդօրինակություն է (աղ. VI, 1): Կասկածից վեր է, որ դա զետեղվել է ոսկե, ինչ-որ զարդի շարանի, կամ պարզապես ուլունքաշարի մեջ: Ծովային զանազան ձևերի խխունձները շատ տարածված էին Հայաստանում: Հանդիպում են տարբեր ժամանակաշրջանների բնակավայրերում (Գառնի), (աղ. VI, 2) և

---

[1] **Ж. Д. Хачатрян,** Гарни V. Античный некрополь (результаты раскопок 1956–1972 гг.). Археологические раскопки в Армении, № 15, Ереван, 1976, с. 105, рис. 41, табл. XX, 1.

[2] **С. А. Есаян, А. А. Калантарян,** Ошакан I, Основные результаты раскопок 1971–1983 гг., Археологические раскопки в Армении, № 18, Ереван, 1988, с. 66, рис. 5.

[3] **Ժորես Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես), էջ 45, աղ. XVI, 10, 15–17:

[4] **Ժորես Խաչատրյան,** Հայաստանի հելլենիստական շրջանի ոսկին (մ.թ.ա. III–I դդ.), Հայաստանի ուշ անտիկ դարաշրջանի ոսկերչությունը (I–V դդ.), Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ – մ.թ. XIV դար), Երևան, 2007, էջ 194–218, աղ. CXXII, 5, 6, CXXIII, 1:

[5] **Ю. М. Гагошидзе,** Самадло, Тбилиси, 1979, с. 74, табл. IX, 19.

[6] **Р. М. Рамишвили,** Археологические изыскания в зоне строительства Жинвальского гидротехнического комплекса в 1976–1979 гг., Археологические исследования на новостройках Гр. ССР Тбилиси, 1982, с. 36, табл., XIII, 2.

Р. М. Рамишвили, Новые открытия на новостройках Аракского ущелья. Краткие сообщения, № 151, Античные памятники Колхиды Иберии. “Наука”, 1977, с. 116, рис. 2,1.

[7] **В. И. Сарианиди,** Афганистан: Сокровища безымянных царей. Наука, Москва, 1983, рис. межд. с. 32 и 33, погр. 1, 3, 4, **V. Sarianidi.** Bactrian gold, from the excavations of the Tillja-Tepe necropolis in North Afghanistan. Leningrad, 1985, Abb (125 հատ), 125 (415 մեծ, 313 միջին, 447 փոքր).

[8] **А. Ю. Алексеева,** Нашивные бляшки из Чертомликского кургана,– в сб.: Античная торевтика, Ленинград, 1986, с. 65, рис. 7а, б.

դամբարաններում[1]: Ներմուծվել են Միջերկրականի և Հնդկական օվկիանոսի ափերից[2]: Ծառայել են իբրև հուռութք, թալիսման, հմայիլ, հմայական պահպանակ և այլն:

Իր հրաշագեղ տեսքով, մյուս զարդերից առանձնանում է ոսկե մանյակը (տրամագիծը 18 սմ): Քառակուսի կտրվածքով բրոնզե ոլորած լարը փաթաթվել է ոսկե բարակ թիթեղով, իսկ հյուսված նուրբ ոսկե թելը փաթաթել են ակոսներկ միջով: Այն ավարտվում է գլանաձև խողովակներով, որոնք երկու կողմից փակվում են օվալաձև ակնաբնով, ամրացված կանաչ ապակիով մեդալյոնին (աղ. VI, 3): Մանյակը վեց տեղով կոտրված է: Ոսկյա թելերը հանված են: Մանյակի պատրաստման եղանակը նույնն է, ինչ Սիսիանի կառավարչի դամբարանից հայտնաբերված առյուծագլուխ ապարանջանը[3]: Նման հնարներով կերտված ոսկե և արծաթե ապարանջաններ, մանյակներ և այլ զարդեր մեծ քանակությամբ հայտնաբերվել են անտիկ աշխարհի տարբեր հնավայրերում[4]: Սակայն Իրանից և նրանից արևելք ընկած տարածքներից նման օրինակ տեխնիկայով ու հարդարանքով, ոսկուց և այլ մետաղներից կերտված ոչ մի ապարանջան, մանյակ կամ այլ զարդ մեզ հայտնի չէր: Ակներևաբար վերջիններս ունեն փոքրասիական ծագում: Չի բացառվում նաև այն, որ ստեղծված լինեն Հայաստանում, օտար ոսկերչի կողմից, տեղացի պատվիրատուի համար:

Երկրորդ ոսկե մանյակը բաղկացած է թռչունների գլխիկներից, որոնք իրարից անջատվում են մանր հատիկներով (աղ. VII, 1): Սնամեջ են (19 հատ, 17-ը ամբողջական, 2-ը բեկորային): Կոտրտված է վեց մասի: Մանյակի մի մասը բացակայում է: Օվալաձև (3X2.5 սմ) հաստ ակնաբնի թխավուն ագաթե քարը օղակված ընդելուզված է լայնաժապավեն շրջանակով, որի կենտրոնով անցնում է հատիկազարդ երկրորդ շրջագոտին (աղ. VII, 2, 3): Ակնաբնի տակի երկայնքով անցնող անցքը կախելու համար է: Հետևը հարթ է, փակ: Քարի ուռուցիկ մակերեսին փորագիր պատկերված է աջ ոտքը առաջ (աղ. VII, 4–5) մեկնած գրիֆոն (intaglio, ипталия): Փորագրությունը խոր է: Համաչափությունները պահպանված են: Մանրամասների մշակումը կատարյալ է: Մագիլները երկար են ու սուր, բացած թևերը հոծ գծերով են, սուր կտուցը բաց: Պոչը աղեղնաձև իջնում է ու բարձրանալով դառնում հորիզոնական: Զգացվում է, որ աշխատանքը հմուտ վարպետ-արհեստավորի ստեղծագործություն է:

Գրիֆոնները (գրիֆներ) – առյուծի մարմնով, արծվի գլխով առասպելական հրեշներ են[5]: Ժողովրդական հին հավատալիքներում գրիֆոնների դերը քիչ է եղել՝ իբրև հերալդիկ կենդանի: Հայտնի են ասորա-

---

[1] **Կ. Հ. Կուշնարева,** Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 23, 93; **Т. С. Хачатрян.** Материальная культура древнего Артика, Ереван, 1963, с. 243; **С. А. Есаян, А. А. Калантарян.** Ошакан, I, с. 80, табл. LX, 24. **Ի. Ա. Կարապետյան,** Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI–IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, № 19, Երևան, 2003, էջ 83, աղ. 54, 10:

[2] **Ж. Д. Хачатрян,** Гарни V, с. 109, рис. 11, 5.

[3] **Ժ. Դ. Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը, էջ 29, աղ. XV, 3:

[4] Նույն տեղում:

[5] Դիցաբանական բառարան, Թարգմ. **Ս. Մ. Կրկյաշարյան,** Երևան, Լույս, 1985, էջ 53:

բաբելական շրջանից[1], տարածված է նաև ուրարտական արվեստում[2]:

Գրիֆոնի պատկերները ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվում: Ձեռք են բերել պաշտամունքային հատկանիշներ: Տվյալ դեպքում Սոդքի (Սոնասարի) դամբարանից հայտնաբերված գրիֆոնի աջ ոտքը առաջ մեկնած դիրքը նման է սրբազան կենդանիների մի ոտքը զոհասեղանի պարզած դիրքին[3]: Նմանատիպ կանգնած գրիֆոն է գտնվել Զղուդերիից (Վրաստան): Այդպիսի կեցվածքով կանգնած հեծյալի կավե արձանիկներ մեծ քանակությամբ ի հայտ են եկել Արտաշատից (մ.թ. I–II դդ.)[4]: Նույն պատկերն է առկա Տիգրան III–ի (մ.թ.ա. 20–8 թթ.) դրամների դարձերեսին (առջևի ոտքը բարձրացրած ձի)[5]:

Նույն ձևով են պատկերված Պարթևստանի թագավորներ Միհրդատ I–ի (մ.թ.ա. 171–168 թթ.) և Գոթարզ II–ի (մ.թ. 41–45 թթ.) Էկբատանում հատված դրամների դարձերեսին պատկերված ձիերը[6]:

Հինարևելյան պաշտամունքային պատկերների մեջ հաճախ են հանդիպում կենաց ծառի մոտ կանգնած և առջևի ոտքը բարձրացրած սրբազան կենդանիներ, հորինվածք, որը սիմվոլիկ է և ունի պաշտամունքային նշանակություն[7]:

Այսպիսով, հավանաբար, ուշ հելլենիստական շրջանում, գրիֆոնի առաջ պարզած ոտքով պատկերը նույնպես շեշտում է նրա պաշտամունքային բնույթը: Այսինքն, գրիֆոնը ձեռք է բերել նոր հատկանիշ: Այս դեպքում հարկ է նշել, որ առյուծի և արծվի կերպարների միացումը գրիֆոնին, իբրև պաշտամունքային կենդանու, ավելի է հզորացնում: Սոդքի գրիֆոնի փորագրությամբ թուխ քարով ոսկե մեդալյոնը, ոսկե շղթայով ծառայել է որպես թալիսման, որպես չար աչքից պահպանող, տիրոջն հզորություն տվող:

Սոդքի (Սոնասարի) դամբարանի նյութերից մեզ են հասել նաև երկու սնամեջ ոսկե մատանի: Ոսկյա բարակ, երկու ժապավենաձև շերտերը իրար հետ զոդելով ստացվել են սնամեջ կողեր (աղ. VIII, 1): Այս եղանակով պատրաստված ոսկե մատանիները լայն տարածում ստացան մ. թ. առաջին դարերում: Դրանց սնամեջ կողերի մեջ լցրել են ծծմբի մածուկ[8]: Դրանք դեպի վեր լայնանալով և փոքր նեղանալով ստանում են հատած կոնի տեսք (աղ. VIII, 2): Կենտրոնում շրջանաձև կամ օվալաձև և բարձր ակնաբնում ագուցվում էր ակնաքարը, որից հետո ակնախորշի եզրերը

---

[1] **Б. Б. Пиотровский,** Искусство Урарту. VIII–VI в.в. до н.э., Ленинград, 1962, с. 45, 49, рис. 11, табл. X, XI.

[2] Նույն տեղում:

[3] **Г. М. Нешсадзе,** Погребения иберийской знати из Згудери. Краткие сообщения, № 151, Античные памятники Колхиды и Иберии. "Наука". Москва, 1977, с. 113, рис. 8.

[4] **Ժորես Խաչատրյան,** Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1981, № 2, էջ 65, 67, աղ. I, 2, **Jaurès Khachatrian.** Arménie trésors de L'Arménie ancienne des origines au IVe siècle, Paris, 1996, № 249, cavalier (Mithra).

[5] **Ջ. Պտուկյան,** Արտաշեյան հարստության դրամները, Վիեննա, 1969, տախտ. 6, նկ. 291, տախտ. 4. նկ. 30:

[6] **D. Sellvood,** An entroduction to the coinage of Parthie. London, 1971, № 8/2, 24/25, 33/23.

[7] **Ժորես Խաչատրյան,** Իրանա-հայկական..., էջ 65: E. Stromenger – M. Hirmer. Fünf jahrtausende Messopotamien. München. 1962, s. 269, 273:

[8] **М. И. Максимова,** Артюховский курган. Л., 1979, с. 66, рис. 19

ծալվում դեպի ներս (աղ. VIII, 3): Մ.թ.ա. առաջին դարի կեսերին ոսկերչական տեխնիկայի կատարելագործման արգասիք են հանդիսանում կրելու համար հարմար թեթև սնամեջ մատանիները, որոնց անցումը կողերից ակնաբուն շատ սահուն է[1]: Այս եղանակով են պատրաստված Սոդքի (Սոնասարի) դամբարանի մատանիները: Նմանօրինակ երեք մատանիներ հայտնաբերվել են Սիսիանի դամբարանից, որոնց զարդաքարերը չեն պահպանվել[2]:

Մատանիները, որպես շքեղ զարդ՝ կրել են հասարակության բոլոր խավերը՝ ըստ դիրքի և կարողության: Մատանին խորհրդանշել է բարձրաշխարհիկ և հոգևոր իշխանություն: Արքայական մատանին միշտ փոխանցվել է հաջորդ թագավորին: Ժողովրդական հավատալիքներում այն ունեցել է հմայական իմաստ, համարվել հուռութք: Մատանին նաև ամուսնական միության նշան էր: Հելլենիստական շրջանում (մ.թ.ա. III–I դդ.) մատանիների քարերը ուռուցիկ էին:

Սոդքի (Սոնասարի) մատանիներից մեկի վահանակը շրջանաձև է (16X16 մմ), ակնապակին՝ մուգ կապտավուն, առանց պատկերի, տակը՝ փակ: Մատանիներից երկրորդի վահանակը օվալաձև է (27X18 մմ), տակը՝ փակ, ակնաքարը՝ մուգ սերդոլիկ: Ուռուցիկ վերին մասում փորագիր պատկերված է Աթենասը, գետնին կանգնած, դեպի ձախ (աղ. VIII, 4, 5, 6, 7): Արմունկով հենվել է պատվանդանին և զբաղեցրել պատմուճանի վեր բարձրացրած փեշը: Հետևում նիզակը պատկերված է սուր ծայրը վերև, թեք դրված դիրքով: Առաջ պարզած աջ ձեռքին կանգնած է բու թռչունը, գլխին կիսագնդաձև սաղավարտ է, որի հետևից դուրս է եկել հերափունջը: Դեմքին երևում է միայն խոշոր քիթը: Երկար շապիկը գոտևորված է կրծքի տակ: Կրծքի վերին մասը եռանկյունաձև բացված է: Ուղղահայաց ծալքերով պատմուճանը, աջ ոտքի վրայով իջնում է մինչև ոտնաթաթը: Փորագրությունը խորը և հստակ չէ: Պահպանվածությունը լավ է: Ինչպես հայտնի է Աթենասը (լատինական Միներվան) Հունաստանի գլխավոր աստվածներից մեկն էր, Հելլադայի ամենասիրված աստվածուհին: Աթենասը հունական դիցաբանությունում իմաստության, խոհեմության, արդարացի պատերազմի, երկնքի, կայծակի, պտղաբերության աստվածուհին էր, աթենական ժողովրդի հովանավորը, քաղաքի գլխավոր աստվածությունը[3]: Նրա գլխավոր տաճարը Պարթենոնն էր, որտեղ կանգնած էր փղոսկրով և ոսկով պատած Ֆիդիասի պատրաստած Աթենասի հսկա արձանը (մ.թ.ա. 438 թ.)[4]: Նա ռազմատենչ աստվածուհի էր: Միաժամանակ արհեստների, գիտության հովանավոր Աթենասը ամենից ավել պատկերվել է երկար զգեստով և նիզակազեն, վահանով ու սաղավարտով: Նրա ոտքերի մոտ հիմնականում նստած էր նրա սրբազան

[1] **М. И. Максимова,** Боспорская камнерезная мастерская. Советская археология, 1957, № 4. с. 75–78.

[2] **Ժ. Դ. Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը..., էջ 33–34, աղ. XVI, 5–7: Ժորես Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի ոսկե մատանիները, Հին Հայաստանի ոսկին, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Երևան, 1997, էջ 13–15:

[3] Мифы народов мира (МНМ). Энциклопедия. Т. I, М., 1987, с. 125–128: Словарь античности. М., 1989, с. 62.

[4] Ֆիդիասի քանդակի հռոմեական ընդօրինակությունը, տես Դիցաբանական բառարան, էջ 7–8:

բու թռչունը, սրբազան ծառը ձիթենին էր[1]:

Մեզ են հասել Աթենասի շուրջ տասը արձաններ: Միրոնի «Աթենասը և Մարսին», լայնորեն տարածված էր Վալետրիի Աթենասը, Լուվրում պահվող «Մեդիչիի Աթենասը» և այլն: Պահպանվել են նաև աստվածուհու մեծ քանակությամբ արձանիկներ, ինչպիսին է օրինակ. Աթենասը ձեռքից բաց է թողնում բուին[2]: Նման պատկեր է նաև Սոդքի (Սոնասարի) ինտալիայի ուռուցիկ մակերեսին:

Անհետաքրքիր չեն օղակաձև (տրամ. 25 մմ) կանգնած պատանու պատկերով երկու ականջօղերը (աղ. IX, 1): Պատկերված դեմքը տափակ է, բարակ թևերով բռնել է կողքը: Կիսակլոր գլխարկի ծայրերը իջնելով ծածկում են ուսերը, բաց թողնելով, սակայն, ճակատի խոպոպները: Որովայնի հատվածում, զգեստի բացվածքի պատճառով, որովայնը և սեռական օրգանները մերկ են (աղ. IX, 2): Վերջինս բնորոշ է Ատտիսին, որը մ.թ.ա. I դ. սկսել է պատկերվել նման բացվածք ունեցող զգեստով[3]: Երկար ոտքերով հենվել է երախը բաց առյուծների գլխին (Մայր Աստվածուհի Կիբելայի կենդանական խորհրդանիշը) (աղ. IX, 3–4):

Փոյուգիական աստված Ատտիսը բնության մեռնող ու հառնող աստված էր: Նրա պաշտամունքը միահյուսված էր աստվածների մայր Կիբելայի պաշտամունքի հետ: Վերջինս Կիբելայի սիրեցյալն էր: Նրանք ներկայացնում էին աստվածային զույգերի, որոնցից պատանիները, դիցաբանությունների մեծ մասի մեջ մարմնավորում են մեռնող և հարություն առնող աստվածների (Կիբելա–Ատտիս, Իշտար–Թամմուզ, Իզիդա–Օզիրիս, Աֆրոդիտե–Ադոնիս և այլն), որոնք մեծ մոր կամ ամուսինն են, կամ սիրեցյալը: Նրանց պաշտամունքային արարողությունները սերտորեն կապված էին միմյանց հետ և կատարվում էին միասին: Դա կապված էր բնության զարթոնքի, նրա ցիկլային հավատալիքների հետ: Հին աշխարհում այս զույգ աստվածություններին նվիրված մի շարք առասպելներ են հայտնի, որոնք թեև որոշ դեպքերում իրարից մասամբ տարբերվում էին, սակայն ունեին նաև շատ ընդհանրություններ: Դրանք մի ընդհանուր գաղափարական կոնցեպցիայի վրա էին կառուցված[4]:

Նման առասպելներ պատմվել են նաև Հայաստանում: Դրանցից մեկը Արա Գեղեցիկի ու Շամիրամի առասպելն է, որի մասին մեզ հաղորդում է Մովսես Խորենացին[5] և Անանուն հեղինակը[6]:

Փոյուգիական աստված Մեծ Մոր և սիրեցյալի՝ Ատտիսի, պաշտամունքը լայնորեն տարածված էր Փոքր Ասիայում: Կիբելան ապրում էր լեռներում, շրջում էր առյուծներ և հովազներ լծված կառքով[7]: Մեջքի կողմից առյուծի գլխի ներքևում պատկերված է հատած նուռ: Առասպելներից մեկում մայրը (Կիբելան) Ատտիսով հղիացել էր՝ կրծքին դնելով նռնենու պտուղը,

[1] MHM, c. 125–128.

[2] Դիցաբանական բառարան, էջ 7–8:

[3] **М. М. Кобылина,** Изображение восточных божеств в Северном Причерноморье в первые века н. э., М., 1978, с. 14–15.

[4] **Գ. Ղափանցյան,** Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 50–51:

[5] **Մովսիսի Խորենացւոյ,** Պատմութիւն Հայոց, Աշխատասիրությամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, I, ԺԵ:

[6] **Թովմա Արծրունի** և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 225:

[7] Мифологический словарь, Л., 1961, с. 117.

որը աճել էր Ատտիսի երկյակի՝ կիսամարդ–կիսահրեշ Ագդիստիսի որդեծ–նական կտրված օրգաններից[1]:

Խնդրո առարկա այս փոքր ականջօղերի վրա ներկայացված է Մայր Աստվածուհու՝ Կիբելայի և իր որդի–սիրեցյալի առասպելը: Գալերը (քրմերը) հասնելով կրոնական գրգռվածության բարձրագույն աստիճանի, ամորձատում էին իրենց և մարմնի կտրատված մասերը նետում էին դաժան դիցուհու արձանին: Այնուհետև որդեծնության կտրատված մա–սերը զգուշորեն փաթաթում և թաղում էին հողում կամ Կիբելայի տաճարի ստորգետնյա սրահներում, որտեղ զոհաբերված արյան հետ դրանք օգտագործում էին Ատտիսի վերստին կյանքի կոչելու և բնության հա–րությունը արագացնելու համար[2]: Հայտնի է, որ մ.թ.ա. 204 թ. Հանիբալի դեմ մղված երկարատև պայքարի ավարտին հռոմեացիները ընդունեցին դիցամոր փռյուգիական պաշտամունքը: Կիբելայի հետ Հռոմ տարվեց նաև իր պատանի սիրեցյալի կամ որդու պաշտամունքը: Դիցուհու պատկերով, ծնծղանների, թմբուկների, սրինգների և եղջերափողերի երաժշտության ներքո նրանք թափորով անցնում էին Հռոմով[3]:

Որոշ տվյալների համաձայն Ատտիսը եղել է հովիվ և սրինգ է նվագել: Ատտիսը պատկերվել է տարբեր հորինվածքներով, միաձուլված այլ աստվածների հետ, թևավոր, սրբազան պար բռնած, սրինգ նվագելիս և այլն: Հայտնի են նրա արձանիկները սրինգ նվագելիս[4], գավազանով և առանց մահակի: Հետաքրքիր են Հայաստանից հայտնաբերված սրինգ նվագող Ատտիսին պատկերող կավե արձանիկները, որոնցից երեքը ի հայտ են եկել Արտաշատից, մեկական օրինակ Մարտունու շրջանի Երանոս գյուղից և Վանաձորից: Վերջինիս մակերեսը պատած է կարմիր ներկով[5]:

Սոնասարի դամբարանից մեզ է հասել արծաթյա մեկ դրամ՝ տետրադրախմա (արծաթ, Աթենք, մ.թ.ա. 104 թ., 16,02 գ. 30,0 մմ, 12 ժ ՀՊԹ): Պատկերված է Աթենասի գլուխը, սաղավարտով, աջ (աղ. X, 1–2): Կետավոր շրջանակ, դարձ. գրությունը վերևում՝ ΑΘΕ, ձախից՝ ΑΜΦ[Ι] ΚΡΑ/ΤΗΣ/ΑΡΙ/[Σ]Τ, աջից՝ ΕΠ[Ι]/ΣΤΡΑ/ΤΟΣ: Բու, ամֆորայի վրա կանգնած, դափնեպսակով շրջապատված: Ամֆորայի վրա՝ Β [?], ամֆորայի տակ՝ Π: Դաշտում աջից՝ ցորենի երկու հասկ[6]: Մենք դժվարանում ենք ասել, թե դամբարանում միայն մեկ դրամ է եղել թե՞ ոչ:

Ուշադրության արժանի են կտրվածքում կլոր լարից պատրաստված արծաթե ապարանջանները (ամբողջականները չորսն են): Դրանք ձևով

[1] **Ջեյմս Ջորջ Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, Մոգության և կրոնի ուսումնասիրություն (Ռուսերենից թարգմ. Սիրուշ Բաղդասարյան–Թափալցյան), Երևան, 1989, էջ 412:

Джеймс Джордж Фрезер, Золотая ветвь, Исследования магии и религии. М., 1980, с. 389.

[2] **Ջ. Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, էջ 442:

[3] **Дж. Дж. Фрезер,** Золотая ветвь, с. 387–391.

[4] **М. М. Кобылина,** նշվ. աշխ., էջ 14, նկ. 16, 23, 24: **M. J. Vermaseren.** The Legend of Attis in Greek and Roman Art. Leiden Brill, 1966, pp. 14–19, pl. IV, 12 VII, 4, VIII, 3, XXVIII, 4, XXIX, 1.

[5] **Zhores D. Khachatryan,** Representations of music on Armenian terracottas and toreutics (second millennium B.C. – third century A.D.). – Imago Musicae XVIII/XIX, – 2001/02, pp. 92–94, № 13–18; **Ժորես Խաչատրյան,** Կավե արձանիկների պատկերագրությունը, – ՊԲՀ, 2002, № 1, էջ 198–201, աղ. 2, 1–5:

[6] Դրամը որոշել է դրամագետ Ռ. Վարդանյանը; Head, B., Historia Numorum. Oxford, 1911. p. 384.

քիչ օվալաձև են: Առաջինը երեք մասի է բաժանված, ծայրերը՝ բաց, ուղիղ կտրված (տրամ. 11,8 սմ), առանց զարդերի (աղ. XI, 1–2): Երկրորդ ապարանջանը պատրաստված է նույն եղանակով, ամբողջական է, շրջանաձև, ծայրերը քիչ հաստանում են, ի տարբերություն առաջինի, երկուական փորագիր գծիկներ ունեն (տրամ. 11,10 սմ) և բացվածքը ավելի փոքր է (աղ. XII, 1–2): Վերին կեսում այն հարդարված է, իրարից քիչ հեռու երկու տեղում երեքական փորագիր շրջանագծերով: Երրորդ ապարանջանը բաժանված է երկու մասի, ձևով ու հարդարանքով նույնն է ինչ-որ երկրորդ ապարանջանը (տրամ. 15,11 սմ), միայն բացվածքը ավելի մեծ է: Չորրորդ ապարանջանը երկու մասի է բաժանված, տարբերվում է նախորդներից: Այն պատրաստված է ավելի հաստ լարից, դեպի ծայրերը աստիճանաբար հաստանալով ավարտվում է ուղիղ կտրվածքով, ունի ավելի հարուստ հարդարանք (տրամ. 12,10 սմ), փորագիր շրջանների մեջ լցված է շեղանկյուն գծերով: Սոնասարի ապարանջանները աղերսվում են Սիսիանի դամբարանի ապարանջանների հետ, միայն վերջիններիս զարդերն ավելի հարուստ են[1]: Դրանք հայտնի են նաև Մինգեչաուրի դամբարանից:

Նման ապարանջաններ կրում էին և թևերին, և ոտքերին, ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիք: Այդ մասին են վկայում Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկները (մ.թ. I–II դդ.)[2]: Հայկական հերոսական էպոսում (Սասունցի Դավիթ) Խանդութը ոտքերին կրում է ապարանջաններ. «Նա ոտքերին ուներ, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր գլխով ու մարմնով դրանց միջով անցնել»[3]:

Սոնասարի գտածոների մի մասը մեզ հայտնի է լուսանկարների միջոցով (աղ. X, 4): Առավել ուշագրավը արծաթյա կիսագնդաձև թասն է, որը մաքրված չէ հողից ու ժանգից, և լուսանկարը վերաբերում է արտաքին մի հատվածին ու հատակին: Երևում են մինչև պսակի ներքևից անցնող ակոսավոր գոտին հասնող կանելյուրները և հատակն ընդգծող համակենտրոն երեք շրջանը: Նշված հատկանիշներով այն աղերսվում է Սիսիանի արծաթյա կիսագնդաձև թասերի, հատկապես շքեղ նմուշի հետ[4]: Բնականաբար Սոնասարի թասի տրամագիծը, բարձրությունն ու քաշը հնարավոր չէ պարզել: Չափերով այն պետք է լինի Սիսիանի կիսագնդաձև թասերին մոտ: Դժվար է ենթադրել Սոնասարի թասի վրա արձանագրություն առկա է թե ոչ: Հարկ է նշել, սակայն, որ Սիսիանի կիսագնդաձև թասն ունի ավելի շքեղ հարդարանք: Թասի դաշտն ար-

---

[1] **Ժ. Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը, էջ 55, աղ. VII, 1–4:

[2] **Ж. Д. Хачатрян,** Об античной коропластике Армении. Вестник древней истории. М., 1979, № 3, с. 94–99, Табл. III, V, 1: **Zh. D. Khachatryan,** Representatians music on Armenian..., p. 89, 90, fi 9, 5–10, **Ժ. Խաչատրյան,** Կավե արձանիկների պատկերագրությունը, աղ. 1, 3, 2, 6, 7.

[3] **Ս. Հարությունյան,** Հայ ժողովրդական վեպը (Կուլտուր պատմական ակնարկ), «Սասնա ծռեր», Եր., 1977, էջ 626:

[4] **К. В. Тревер,** Памятники греко-бактрийского искусства, М.–Л., 1941, с. 35–36; **Ժորես Խաչատրյան,** Սիսիանի դամբարանը, էջ 48–49, աղ. IV, 1, 2, V, 1–5: **J. D. Khachatryan.** Silver bowls and basins of Armenia in the late Hellenistic Period. Iranica Antique. vol. XXIV, 1989, pl. II, a, b; **Zhores Khachatryan.** The tomb of Sisian (Second half of the ist century B.C.). Parthica incontri di culture nel mondo antico. Pisa. Roma. 2011. Fig. 7, 1.

տաքուստ բաժանված է ութ հավասար հատվածների, որոնցից առաջին չորսը հարդարված են կանելյուրներով: Մյուս չորսը՝ սուր երկարավուն տերևներով, ակներևաբար տերևներով և փոքր ինչ ոճավորված խաղողի որթերով: Թասերը դրվագազարդ են, պատրաստված են ձուլելու եղանակով զարդաձևերը՝ փորագրելու և դրվագելու հնարքով: Կիսագնդաձև թասերն օգտագործվել են աստվածներին նվիրված սրբազան արարողություններում՝ քաղցրահամ նյութերով հեղումներ կատարելու համար: Դրանք հետագայում կորցրել են իրենց նախնական իմաստը, ձեռք բերել կիրառական լայն նշանակություն[1]:

Սկավառակաձև հարթ մակերեսով, եզրերը ատամնաձև հարդարված արծաթյա իրը, հավանաբար հայելի է, որը հաճախ էր դրվում մահացածների հետ (աղ. XI, 3): Հայելին կապված էր անդրշիրիմյան աշխարհի հետ: Ինչ վերաբերում է եռատերև պսակով մեկ կանթանի սափորին, այն ամենայն հավանականությամբ օգտագործվել է հեղումների համար (աղ. X, 3):

Այսպիսով, Սոդքի (Սոնասարի) դամբարանի, թեկուզ մասամբ մեզ հասած ոսկե, արծաթե գտածոները, Աթենասի արծաթյա դրամը, կահկարասիները և բազմազան ու բազմատեսակ առարկաները փաստում են տիրոջ շքեղության նկատմամբ ունեցած հակումները: Հավանաբար հանգուցյալը գեղեցիկ սեռի և միջին խավի ներկայացուցիչ է:

Նյութերի մի մասը թեև աղերսվում է Սյունիքի Սիսիանի դամբարանի նյութերի հետ, սակայն վերջինս իր գավաթի վրայի արամեերեն արձանագրության համաձայն անկասկած եղել Սյունիքի կառավարիչը: Արախսզատ նշանակում է «աստվածների կողմից պաշտպանվող» կամ «աստվածների հովանավորության տակ ծնված»[2]: Հավանաբար այդպես իրենց կոչում էին թագավորներն ու բարձրաստիճան իշխանավորները: Գահնամակում [Առաջին իշխանն Հայոց և Մաղխազն] ա. Սիւնեաց տէրն էր[3]: Սիսիանի դամբարանը լավ մշակված կրաքարերով կեղծ թաղ է, դիակիզում է կատարված, ուղեկցվող նյութերը շատ հարուստ են: Սոնասարի դամբարանը ևս պատկանում է նույն ժամանակին՝ մ.թ.ա. I դ. երկրորդ կեսին, ինչպես Սյունիքի դամբարանը:

[1] **Կ. Վ. Тревер,** Греко-бактрийская золотая чаша, “Сокровища Эрмитажа”, М.-Л., 1949, с. 101–102.

[2] **Ա. Գ. Периханян,** Арамейская надпись на серебряной чаше из Сисиана. – Историко-филологический журнал, 1971, № 3, с. 78–81, рис. 1, 2.

[3] **Բ. Հ. Հարությունյան,** «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1976, № 2, էջ 58:

Աղյուսակ I – 1, 2

Աղյուսակ II – 1, 2, 3

Աղյուսակ III – 1, 2, 3

Աղյուսակ IV – 1

Աղյուսակ V – 1, 2

Աղյուսակ VI – 1, 2, 3

Աղյուսակ VII – 1, 2, 3, 4, 5

Աղյուսակ VIII – 1, 2, 3, 4, 5, 6, 7

Աղյուսակ IX – 1, 2, 3, 4

Աղյուսակ X – 1, 2, 3, 4

Աղյուսակ XI – 1, 2, 3

Աղյուսակ XII – 1, 2

ЖОРЕС ХАЧАТРЯН

АНТИЧНОЕ ЗАХОРОНЕНИЕ СОДСКОГО РАЙОНА АРМЕНИИ

(РЕЗЮМЕ)

В статье представлены результаты работ проведенных на плато в районе Сод в горах Сюника, в десяти километрах от села Сонасар, где была обнаружена гробница. Среди найденных там артефактов предметы домашней утвари, в том числе резные ножки от сидений, являющихся образцами культурного быта Армении. В статье представлено также описание нескольких дошедших в виде фрагментов художественных изделий из золота, серебра и бронзы. Разнообразие и уровень исполнения дорогих и эстетически ценных предметов свидетельствует о высоком социальном статусе их владельца. Так, там найдено собранное из элементов в виде птичьих голов золотое ожерелье с медальоном. Медальон представляет собой вправленный в овальную оправу, обрамленную гранулами, агат, украшенный резным рельефным изображением грифона.

Найдены также два золотых кольца, одно из них представляет собой выпуклую камею овальной формы с рельефным изображением Афины с совой в руке. Обнаружены две серьги в виде колец, часть окружности которых представляют фигуры юношей. В изножьи каждой из фигур помещены головы львов, являвшихся одним из символов Кибелы, в чем мы видим отражение легенды матери богов Кибелы и ее любимца Аттиса. Как кольца, так и ожерелье с овальным драгоценным камнем синего цвета имеют сходство с артефактами, найденными в гробнице в Сюнике – Сисиане.

В Сисианской гробнице была найдена также серебряная чаша с арамейской надписью, из которой следует, что владельцем чаши был Арахсзад, что означает “охраняемый богами”, или “рожденный под покровительством богов”, так называли себя владыки или их приближенные. Скорее всего этот склеп принадлежал владетелю Сюника. Сисианский склеп представляет собой памятник второй половины I века до н. э. К этому же времени относятся также сонасарское захоронение и обнаруженные там находки.

ZHORES KHACHATRYAN

THE ANTIQUE MAUSOLEUM IN SODK DISTRICT OF ARMENIA

(SUMMARY)

The publication is dedicated to an ancient burial vault on an elevated valley in Sodk Region of the Siunik World at a distance of ten km. from Sonasar Village. Among the artifacts presented are the enclosure of the vault, entombment and household furniture, the type of fancy work done on the legs of the latter, which are important data for the culture of Armenia. Also discussed are some beautiful objects made of silver and bronze that have partially reached our time. The differences and variations of the objects discovered attest to the tendencies and aspirations of the host to the reigning luxury and to the surrounding expensive and highly aesthetic artifacts. The findings indicate that the deceased belonged to the fair sex, evidently to the middle class. Among the findings to be noted is a gold necklace, with its oval medallion and green glass inserted in a shield-formed plaque. Another gold necklace is ornamented with birds' heads and a convex agathic gem inserted in a fancy oval orifice, with a relief of a vulture. One of the two gold rings also carries oval shields, with a convex camellia jewel, a relief showing Athena, standing, with an owl in his hand.

There is also a luxurious ring-shaped image of a standing youth, two earrings. Depicted upon them is a worshipping scene of Mother of Gods Kibela and favorite Attis. Both the finger rings, oval-shaped necklace with green glass in an oval jewel and the silver bracelets are associated with artifacts in the tomb of volta finta of Siunik – Sisian. According to the legend on the silver cup in Aramean, discovered in the Sisian tomb, there is no doubt that the deceased was the Governor of Siunik. Araqszat, mentioned in the legend, signified "protected by gods" or "born under the protection of gods". That was the designation acquired by the kings and those in power. The mausoleum of Sisian is a monument of the late first century B.C. With regard to the discovery of Sonasar, it was also a burial place of the late first century B.C.